ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ ՀՀ Շիրակի մարզի <<Գյումրու թիվ 29 հիմնական դպրոց>> ՊՈԱԿ- ի կերպարվեստի (10 դասաժամ) և մաթեմատիկա (8 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

1.Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /Ձև 1/

2.Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ / դիպլոմ/

3. Անձը հաստատող փաստաթուղթ

4. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

4. Ինքնակենսագրություն /Ձև5/

5. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ:

6.ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ

7.Հրատարակված հոդվածների ցանկ, կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)

8.Որակավորման տարակարգ՝ ունենալու դեպքում

9. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում է 2026 նոյեմբերի 19-ից մինչև դեկտեմբերի 02-ը ներառյալ՝ ամեն օր ժամը 10:00 – ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2026 թվականի դեկտեմբերի 08-ին՝ ժամը 14:00, Շիրակի մարզի Գյումրու թիվ 29 հիմնական դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ /093354949/: